Վահան Թոթովենց

Վարժուհին

Ես ստացա նամակ մը Միտրլ Ուէստ բնակող իմ բարեկամես, որ կը գրե հետևյալը.

Ա

Կարծեմ դուն կը հիշես Չալին, որ իր ճակատին վրա տընկված մազին համար Կոտոշ Չաչի կը կոչեինք: Կոտոշը վերջերս սարսափելի արկածե մը անցավ, թերևս քեզի համար հետաքրքրական ըլլա: Չէ՞ որ ս. Փոլը քու կես վաթանդ է: Կոտոշը քու մեկնելեդ վերջ սկսավ գորգի վաճառատուն մը գործել մատները երբեք չի կրցավ ճկել, որպեսզի կարենար ասեղ գործածել, ասոր համար վաճառատան գլխավորը, դուն կը ճանչնաս, պրն. Կյուլյանը, Կոտոշին նետեց պեյամընթը՝ առտվնե մինչև իրիկուն գորգ լվալու: Կոտոշը առավոտ կը մտներ ծակը, իրիկունը դուրս կելլեր և փորքենպինծ մը ուտելեն հետո՝ կերթար սենյակը, այնպես որ անիկա հաջողեցավ փոքրիկ գումար մը ունենալ իր բարձին տակ:

Կոտո՛շ, նոր գործդ ինչպե՞ս է, կը հարցնեին:

Յազլի է, – կը պատասխաներ Չալին ուրախությամբ և մեկ քանի դոլարներում առջև շվարած:

Անցավ ժամանակ մը, Կոտոշը սկսավ մտածել:

Կնիկ մը պետք է ինծի, կըսեր իրեն հանդիպողին, աղեկ կնիկ մը: Պրն. Կյուլյանը և մենք բոլորս ալ քաջալերեցինք Կոտոշը, որ կնիկ մը անհրաժեշտ էր, որովհետև

օձիքին վրա ձեթը մատ մը բոներ էր, փիս ու աղտոտ կյանք մը կապրեր և, կը մտածեինք, որ որևէ հայ կնիկ մը պիտի գար այս արարածը ազատելու իր կեղտոտության մեջեն, կեղտոտություն մը, որ իր համար դարձած էր այլևս բնական և սիրելի:

Գիտես, որ Կոտոշը Քոռփեցի էր և 25 տարեկանին Ամերիկա գաղթած, լսեց, որ Քոռփեցի աղջիկ մը որուն համար համակրություն ունի եզեր՝ ազատեր է և կը գտնվի Մեզրեն: Կոտոշը մեկ քանի օր վեր վար ըրավ, և որոշեց դրամ ղրկել Քոռփեցի ճուվարին, որ այդ աղջիկը առնե և բերե Ամերիկա: Ժամանակ մը անցնելե հետո ճուվարեն նամակ մը եկավ, որ կիմացներ Իզմիրեն, թե բերած աղջիկը երկու օր հիվանդացեր և մեռեր է Իզմիրի մեջ և ճուվարը կավելցներ. «Կարապե՛տ, օղո՛ւլ, հեչ բան չօգնեց, երկու օրեն ափուչիք եղավ, բայց ասոր համար հե՛չ, հե՛չ, հե՜չ հոգ մի ըներ, այստեղ ուրիշ աղջիկ մը կա, բոյ բուսաթը տեղը, վարժուհի, նստվածքը, օլրտվածքը տեղը, ամեն բանով հեչ խուսուր չունի: Եթե չես հավտար, ահա թեվսիրը (լուսանկար), աչքդ բաց ու տես»:

Ճուվարի նամակին մեջ ներփակված էր նաև վարժուհիին պատկերը, մի գեղեցկուհի, ձևերը՝ եվրոպական, նայվածքին սլացքը՝ իմացական խորունկ բովանդակություն շեշտող, մազերը առատ և սև:

Ճուվարը կավելցներ, որ տակավին պետք ունի 300 դոլարի: Կոտոշի արկածը կսկսի այս թվականեն: Գնաց եկավ, ասոր հարցուց, անոր հարցուց, վերջապես համոզվեցավ, որ արդեն ղրկած 300 դոլարը պարապը երթալու չէ:

600 խարճենք տե, եզրակացուց անիկա, – գոնե քեզ մը ձեռք ձգենք:

Կոտոշը 300 ևս ղրկեց ճուվարին, ճուվարը ճամբա ելավ դեպի Քանադա:

Բ

Ճուվարը Քոռփեի մեջ Չավուշ կը կոչվեր, այնքան զալիմ կնիկ էր, տղամարդուց հետ քյուֆյուրով-քաֆանով գլուխ կելներ, զանազան միջնորդություններ կըներ, տերտերն անգամ կը խոնարհեր անոր առջև: Նամուսուզ կնիկ է, կըսեր տերտերը:

Կոտոշը անտեղյակ էր այն կռիվին, որ տեղի ունեցած էր իր հոր և ճուվարին միջև:

Ճուվար հերկ պահող կին էր:

Կոտոշի դրամը ուղարկելեն ետքն էր, որ հանդիպեցավ արիշ ծեր Քոռփեցիի մը:

Ցավրո՛ւմ, Չալի՛, ըսավ Քոռփեցին,– ճուվարը եթե քեզի թեքմե (աքացի) չի նետե՝ ես երեսուն տարի է Ամերիկայի մեջ բեղերս չեմ ածիլեր՝ ածիլեմ:

Կոտոշը ալեկոծվեցավ, բայց ճուվարը արդեն ծովուն վրա էր դեպի Քանադա: Վարժուհին կամաց կամաց կը հասներ իբրև իր քույրը, այդպես էր ըսված Ամերիկյան գաղթականական իշխանությանը առջև:

Վարժուհին մուտք կը գործեր Ամերիկա իբրև Կոտոշի հարազատ քույրը:

Կոտոշ, մի մտածեր, քեծը քեծ է, հայրենակիցիդ շատ ականջ մի կախեր:

Գ

Քանադական նավահանգիստե մը նամակ ստացավ Կոտոշը, որ ճուվարը հանդերձ մեկ քանի աղջիկներով հասած էր: Ճուվարը երկու ուրիշ աղջիկներու հետ կը մեկներ ուղիղ Ամերիկայի Հայոց մայրաքաղաք Ուստր, իսկ վարժուհին ալկուգար իր մոտ:

ՈՒզան, թե՞ք մը չութ մը (ծո՛, մեկ թե զույգ), բացականչեց Կոտոշը նամակի ընթերցումեն հետո:

Պրն. Կյուլյանը իր հավատարիմ գործավորին համար ուզեց անակնկալ մը սարքել:

Չալի՛, ըսավ պրն. Կյուլյան, օթոմոբիլով երթանք կայարան և վարժուհին դիմավորենք:

Կոտոշը չի կրցավ պատասխանել, այնքան ուրախ էր, ակռաները բացավ, գլուխը քերեց և հագիվ՝

Աղա, էվալլա, կմկմաց:

Կոտոշ Չալին ամբողջ գիշեր չի քնացավ, վարժուհին լուսանկարը դրավ առջևը, երկար ուսումնասիրեց, որպեսզի երկրորդ օրը դյուրությամբ կարենար զատորոշել իր ապագա թագուհին Ամերիկայի հարյուրավոր ճամբորգներու մեջեն: Վարժուհիի լուսանկարի մասին ամբողջ գաղութը տեղեկություն չուներ:

Տեր և տիկին Կյուլյանը Կոտոշին հետ միասին, օթոմոբիլի վրա, գացին կայարան, իսկ մնացյալ հայ գաղութը ամբողջ փութացած էր անոնցմե առաջ վարժուհին դիմավորելու: Մեծ բազմություն կար:

- Չալի՛, ինչո՞ւ չէ, յավրո՛ւմ, զարկի՛ր, վերջը–վերջը կնկա մը տեր պիտի ըլլաս:

- Տակեն բան մը դուրս չի գա նե, կը պատասխաներ Կոտոշը, որուն ջիղերը զարմանալի արագություն ստացեր էին:

- Ծո՛, կոտո՛շ, – հարցուց մեզմե մեկը, ի՞նչ նշան պիտի ունենա նշանածդ, ինչպե՞ս պիտի ճանչնաս, չես տեսեր, նկարագրությունը չունիս:

Կոտոշը հպարտությամբ և քիչ մը արհամարհանքով գլուխը եբերցուց և արտասանեց.

Կեռկտէ յըլտըզ էլլի տիր,

Էլլիսի տէ՝ պէլլի տիր,

Պէն յարիմը թանըրըմ,

Մուրաթընտան պէլլի տիր:

Երկնքում աստղերը հիսուն են,

Հիսունն էլ հայտնի է:

Ես իմ յարիս ճանաչում եմ

Դեմքից հայտնի է:

Թրեյնը հասավ: Չեմ գիտեր ինչու, բայց Կոտոշը ամբողջ մարմնովը կը դողար: Հարյուրավոր ճամբորդներ իջան գնացին և կամաց–կամաց կայարանը պարպվեցավ:

Վարժուհին չիկար:

Չալի, տեսա՞ր, որ չի կրցար գտնել, կարմիր թաշկինակ մը բան մը նշան պիտի ունենար, որ կարենայինք ճանչընալ:

Հազիվ կամաց մը գրպանեն հանեց վարժուհին լուսանկարը և բարկությամբ հարեց.

Էս թեվսիրը մենտիլեն ազեկ չէ, կերևա քի չեկան:

Մենք բոլորս ալ բոլորվեցանք լուսանկարին շուրջը և կարծիքներ կը հայտնեինք, որ իսկապե՛ս այսպիսի մեկը անցած չէր և համոզվելու վրա էինք, թե վարժուհին չէր ժամանած այդ թրեյնով, երբ կին մը մոտեցավ մեզի և սկսավ հայերեն խոսիլ: Վարժուհին էր, փաչաները կախված, կարմիր, կարմիր մազերով, քիթը այնքան ահավոր, որ կարծես մարմինի ուրիշ մաս մըն էր տեղափոխված աչքերուն տակը, բերնին ճիշտ վրան, գագաթը կարմրած և շողարձակ, աչքերը ճպռոտ, փորը... վերջապես արարած մը, որ նույնիսկ չէր կրնար դիմանալ Կոտոշի մը գեղեցկագիտական ճաշակին:

Վա՛յ, ճուվա՛ր, վա՛յ, հիմա մերս լացիր, ըսավ Չալին և սկսավ քալել դեպի կայարանեն դուրս, երբ պրն. Կյուլյանը սաստեր մնալ:

Պրն. Կյուլյանը պատվիրեց շոֆերին Չալին ու վարժուհին տանել տուն և վերադառնալ կայարան:

Մենք մնացինք կայարանը մինչև օթոմոբիլը վերադարձավ և տեր և տիկին Կյուլյան մեկնեցան իրենց բնակարանը:

Դ

Կոտոշ Չալին երեք օր դուրս չելավ:

Է՛, Չալին ի՞նչ եղավ, կը հարցնեին բոլորը:

Չալին չիկար:

Վերջապես երեք օր հետո լույս աշխարհ եկավ:

Չալի՛, ո՞ւր էիր, հարցրեցի, ի՞նչ եղար, ե՛՛րբ պիտի կարդվիս:

Պաթմիշ եղա, գլխով ոտով հորը ինկա, պատասխանեց, գրեթե լացակումած, Կոտոշ Չալին: Անիկա բացարձակապես կը մերժեր ամուսնանալ:

Չալին օրենքով՝ ստիպված էր վարժուհիին պահել իր մոտ, եթե ոչ կառավարությունը զայն կամ բանտ կը ղրկեր և կամ երկրեն տեղահան կըներ:

Քույրս գրված է, քրոջս պես ըլ կը պահեմ, ուրիշ խոսք կա՞:

Բայց վարժուհին չէր կրնար երկար մնալ իբրև քույր:

Բարեբախտաբար Քալիֆորնիայեն վրա հասավ էշ Մարտոն:

Դուն անպայման հիշելու ես էշ Մարտոն: Սա այն միակ հայն էր, որ հրեաներուն տնտեսագիտություն սովրեցուց, կարող ես երևակայել: Իր անունին էշ մակդիրն ալ շինծու կամ ետքեն փակած բան մը չէր, երկիրը եղած ատեն, իսկ «մեքրեպ Մարտո» կը կոչեին և ոևէ գաղտնիք չիկար այս հորջորջումին ետին, պարզապես էշ էր: Ամերիկա անցնելեն հետո ալ իր հայրենակիցները չուզեցին ղրկել զայն մակդիրեն:

Երբ զինքը ճանչցողներ կըլլային՝ Մարտոն հպարտություն կզգար հայտարարելու.

Ինծի էշ Մարտո կըսեն:

Մարտո՛, յավրում, աղջիկը պատրաստ է, մեր ձեռքը, այդ տարիքեդ վերջը այս աղջիկեն ավելի աղեկը չես գտնար, կը խրատեր Կոտոշի փեսան:

Տարիքդ, խոսքը մեջերնիս, հիսունը անցած, վարժուհիս տահա 25, ըսե 30:

Ծախսը շատ չէ, կը շարունակեր փեսան, քեզի համար 600 կուտը ի՞նչ բան է:

Էշ Մարտոն՝ իշությամբ պատրաստակամ, պատասխանեց.

600 կուտը բան մը չէ, սարխոշի մը փսխուքը, լաքին մեյ մը քեծը տեսնամ:

Բայց «քեծը» շուտ մը ցուցնելը, ըստ կոտոշի և իր փեսային, աղեկ չէր:

Չի տեսածի թող քիչ մը տաքնա, ըսավ փեսան:

Աղեկ կըսես ամմա՛, աղա փեստ, հայիս քի՝ թեզմիշ եղավ:

- Էշ Մարտո՛ն թեզմիշ ըլլի՛... դուն քու բանդ հայիր:

Մեկ քանի օր անցնելեն հետո փեսան ժամանակը հասած նկատեց վարժուհին ներկայացնել Էշ Մարտոյին:

Մարտո՛, հետիե մը առ, վրոթզրոթընա աշխին տեսնալ չըլլիր:

Էշն ու փեսան կիյնան շուկա վարժուհիին համար նվեր մը գնելու:

Ո՞ւր պիտի երթանք, կը հարցնե փեսան:

- Դուն իմ ոտքիս նայիր, կը պատասխանե Մարտոն:

Մարտոն շիտակ կուղղվի 5 և 10 սենթս ստորները...

Մարտո՛, իշությունդ վրադ հախ պիտի ընես:

Է՛, է՛, է՛, քեծը չի տեսածի ատկեց ավելի մեյվա չեմ ուտեր, կը հարե Մարտոն, ուզելով ցուցնել իր իմաստությունը:

Բայց փեսան կընդդիմանա, վեր վար կը համոզե, որ 5 կամ 10 սենթով աղջիկ տեսնալ բացարձակապես չըլլար: Հայտե, շատ մի վռվռար, Մարտոն կը հրամայե փեսային, երթանք խոնտուրա (կոշիկ) մը առնենք: Եվ իրրև

վճռականություն կը հայտարարե. Հինգ կուտը որ անցնի՝ ինծի ալ աշխին պետք չէ:

Մարտո՛, ֆելեքին ի՛նչ ըսեմ, որ քու ոտքդ աղջիկ է բերեր, կը վերջացնե փեսան:

Կոշիկին խանութին մեջ Մարտոն ամոթեն և կոիվ չընելու համար և վերջապես միտքը դնելով անպայման վարժուհին տեսնել և առանց կնկա շատ էր պանդխտությունը քաշեր՝ կը համաձայնի 7,50 վճարել և դուրս գալ:

Ճամբան Կոտոշ Չալին կը պատահի անոնց, փեսան քիթը կախեր, իսկ էշ Մարտոն՝ կես զայրացած:

Չալի, յոթուկեսս գնաց, տեսնամ վարժուհին ինչ դուրս պիտի գա:

Փեսան կամաց մը կը փսփսա Կոտոշին.

Մտիկ ըրե, մինչև ծախսերը չառնես՝ խոսք չիտաս,յահուտին խալթ է ըրեր դեմը:

Ես խոսք տված էի իրիկունը ժամը 6-ին հանդիպիլ իրենց: Իբրև չեզոք կողմ՝ ինձ տրվեցավ վարժուհին Իշուն ներկայացնելու պատիվը:

Մարտոն սովորություն չուներ վերարկու հագնելու, իր հայրենակիցները ելան՝ որ վերարկու մը անպայման հարկավոր էր: Մարտոն դեմ գնաց այս մտքին:

Աշխինին վրա յաղլի մարդու տպավորություն թապամիշ չըլլինք, հայտարարեց անիկա:

Բայց իրականապես վերարկու մը անհրաժեշտ էր, որովհետև վարժուհին միայն համոզված էր անծանոթին հետ ամուսնանալու՝ դրամ ունենալուն համար:

Կոտոշը և փեսան էշ Մարտոյի հոգեկան վիճակը բերած հասցուցած էին այն կետին, որ վարժուհին էր մերժողի կամ ընդունողի դերին մեջ:

Վերարկու ունենալու կամ չունենալու հարցը բուռն վիճաբանության առարկա էր, երբ էշը ձայնը դրավ և հանկարծ պոռաց.

Ծո՛. աղբ՛ար, որ քեծր ցուցուցեք մեյ մը, օվրոքոթ չունիմ, նորը չեմ առներ, էտի ձեր խաֆայեն հանեցե՛ք...

Այն ատեն հասկնալի եղավ մեզ համար, որ Մարտոն վերարկու դնելու վտանգին մեջ կզգար ինքզինքը: Իսկույն իր հայրենակիցներեն մեկը հանեց մուշտակ օձիքով վերարկուն և հարեց.

Ի՛նչ կը պոռաս, քըզի չեն ըսիր քի օվրոքոթ առ հագի՛ր:

Էդպես ըսե, ես գիտցա քի օվրոքոթի մը ծախսն ալ շալակս պիտ հանեք, և ինքնիրեն, - մեղա Աստուծո, խելքըն բան մը եղավ:

Ելանք դուրս դեպի վարժուհին:

Քիչ մը քալելեն հետո՝ փեսան ընդոստ կեցավ.

Հետիեն մոռցանք...

Բոլորը իրարու երես նայեցան, իսկ Մարտոն հազիվ քըթին տակ մրթմրթաց.

Հետիեն քովս է, յոթնուկեսս խաշավ:

Մենք շարունակեցինք մեր ճամբան:

Չալի՛, վարժուհին գիտե՞, որ պրն. Մարտիրոսը կուգա,– հարցուցի ես:

Գիտե, պատասխանեց Չալին:

Ես երևակայեցի վարժուհիին դողահար վիճակը:

Ե

Մտանք Չալիի տունը: Վարժուհին առաջին անգամ չերևաց: Չալին ներս կերթար ու կուգար:

Աղա փեսա...

Ներողություն,– և փեսան ներս գնաց, Չալին խոսք ուներ: Մենք լսեցինք փեսային ձայնը, որ կրսեր.

Աղեկ է, շատ մայրուքր մերթար:

Փեսան դարձյալ ներս եկավ: Մենք լուռ էինք:

Էսօր պաղ է, պր. Մարտիրոս, խզեց լռությունը փեսան:

Պաղ է, էֆենտըմ, քավլիցի, պատասխանեց էշը, փորձելով իմաստուն բան մ՝ըսել:

Ես տեսա, որ Մարտոն նվերը տակավին ձեռքին մեջ կը պահե: Մտածեցի, որ այդ բանը կարող էր աժան տպավորություն թողուլ վարժուհիին վրա, իսկույն ընդմիջեցի խոսակցությունը և կամաց մը. Պր. Մարտիրոս, ձեռքինդ սեղանին վրա դիր:

Պր. Օվանես, դարձավ ինձ Մարտոն, կուզեմ օր ձեռքովս վարժուհիին ոտքը կոխեմ:

Ո՛չ, ստիպեցի ես, այդ վերջի բան է, առայժմ ավելորդ է:

Մարտոն ականջները կախեց և հնազանդեցավ, թուղթի մեջ փաթթված կոշիկը գնելով սեղանին վրա:

Չալին եկավ և ականջիս փսփսաց որ վարժուհին պիտի հայտնվի:

Վարժուհին ներս եկավ, էշ Մարտոն շվարած՝ անմիջապես ոտքի կեցավ, ես հազիվ կրցի արտասանել.

Օրիորդ Կոտոյան:

Պարոն Մարտիրոս:

Վարժուհին խոնարհություն ըրավ, որուն հետևեցավ էշ Մարտոն և նստավ իր տեղը: Ես աթոռ տվի օրիորդին և նստեցուցի Մարտոյին ճիշտ դեմը:

Տիրեց խոր լռություն: Մարտոն սկսավ իր բեղերը ավելի շշել, որոնք գլխիվայր դարձված երկու ահավոր ստորակետներու կը նմանեին:

Էսօր յաման պաղ է, պր. Մարտիրոս, դարձյալ լռությունը խզեց փեսան:

Պաղ է, էֆենտըմ, մասամբ... իսկույն պատասխանեց մեր էշը:

Բայց այս տարի ես շատ պաղ չեմ տեսնար, ավելցուց Չալին:

Քիչ մը լռութենե հետո էշը հազաց, քիչ մը բարձրացավ ու նորեն նստավ և հազիվ դողալով բացավ բերանը.

Օրիորդ վարժուհի, քըզի՞ համար ըլ էս երկիրը պաղ է:

Տակավին դուրս չեմ ելած, պատասխանեց վարժուհին:

Մարտոն հազաց, շինծու հազ մը փորձելով:

Փեսան ինձ աչքով ըրավ՝ խոսքը բանալ: Ես ալ, անփորձ այդ տեսակ գործերու մեջ, ուղղակի անցա հարցին և ըսի.

Այս իրիկուն մենք այստեղ հավաքված ենք շատ կարևոր խնդրո մը համար (չորս կողմեն հազեր, մեր վարժուհին գետինը կը նայի), օրիորդ Կոտոյան, պր. Մարտիրոսը եկած է ձեր ձեռքը խնդրելու:

Վ. Թոթովենց, գիրք 2 Մարտոն դարձյալ կայնեցավ ոտքի, մատները մեկ մը քթի ծակերուն և մեկ մը բեղերին, վարժուհին արագ մը ելավ և փախավ ներս:

Իշտե էս չեղավ, ըսավ էշ Մարտոն:

Չէ՛, Հայաստանցի աղջիկը այդպես կընե, պատասխանեց փեսան:

Ես ալ համաձայնեցա փեսային, որ օրիորդի համար ճիշտ էր այդպես վարվիլը:

Է՛հ, դո՛ւք գիտեք:

Չալին ներս գնաց, քիչ հետո վարժուհիին հետ դարձյալ դուրս եկավ:

Մենք խոսակցությունը բացինք ուրիշ խնդիրներուն մասին, բայց Մարտոն հայտնապես կը ցուցներ, որ վարժուհիին կամ խնդրույն մասին խոսեինք: Բայց նորեն խոսակցությունը բանալ դժվար էր, և մենք շարունակեցինք առաջվան նման: Մարտոն կուզեր վարժուհիին առջև իմաստուն երևնալ, անիկա այնպիսի վեճեր և այնպիսի անտեղի և անիմաստ բառեր մեջ կը նետեր, որ անկարելի էր ծիծաղը զսպել: Մեկ քանի անգամ, քաղաքական կուսակցական հարցի ընթացքին՝ Մարտոն վարժուհիին հարցնելե հետո, թե ինչպես կը սիրեր այս երկիրը, ուրիշ հարց մը նետեց մեջտեղը.

Ներողություն, օրիո՛րդ, պապուդ անունը ի՞նչ է ուղղակի:

Պապուս անունը Մարտիրոս է, պր. Մարտիրոս, պատասխանեց վարժուհին:

Մարտոն սկսավ անճոռնի կերպով ծիծաղիլ և հարեց.

Միանգամայն, օրիորդ, մեր խնդիրը էփավ, քանի որ պապուդ անունն ալ Մարտիրոս է: Եվ ցատկեց իր տեղեն և ուզեց օրիորդին ձեռքը բռնել:

Տո՛ւր, ձեռքդ տո՛ւր, հեյ յավրում, մեր գործը էփավ:

Այս ժեստին վրա վարժուհին դարձյալ ներս փախավ:

Փեսան տաքցավ:

Էշը իշությունը պիտի ընե, հերի՛ֆ, քառսուն անգամ աչոք-ունոք ըրին քի՝ մի խոսար:

Աղբա՛ր, ըսավ անիկա,– հընկ-մընկ չուզեր, ես հոս քեֆի համար չեմ. եկեր, կուզե քի չուզեր, յոթուկեսը ես սարսախության համար չի վառեցի, ձեռքը պիլե չի թողուց որ բռնեի, տահա քի կընի՞կս պիտի ըլլի, ես կերթամ, ինչ կուզեք էն ըրեք:

Անկարելի եղավ էշը ետ կեցնել, ձգեց ու գնաց: Մարտոյին դուրս ելլելեն հետո Կոտոշը զայրացավ փեսային վրա:

Էրիր-չէրիր՝ թեզմիշ էրիր, վա՜յ իմ խաֆային:

Ծո՛, մի՛ նեղվիր, էշ Մարտոն թեզմիշ չըլլիր, մի վախնար, ես վաղը կը տեսնամ, պատասխանեց փեսան:

Ես ուզեցի վարժուհին տեսնել և անոր միտքը հասկնալ: Չալին ներս գնաց և բավական երկար խոսելեն ետք՝ վարժուհիին հետ միասին եկան դուրս:

Օրիո՛րդ, հարցուցի ես, կուզեիք երիտասարդին հետ ամուսնանալ:

Պր. Չալին և աղա փեսան դիտեն, պատասխանեց վարժուհին:

Ես հասկցա, որ Չալին ներսը դաս տված էր:

Շատ աղեկ, վերջացուցի ես և դուրս ելա դեպի իմ սենյակը:

Ջ

Քուրի՛կ, խենթ-խենթ մըլլիր, ի՜նչ է եղեր տղան, բոյը բուսը տեղը, փերե ունի, վերջապես ճակտիդ եազին է, տահա ուրիշ բան մըլ կա օր ծեր է, մեկ քանի տարիեն կը սատկի կերթա, կը խրատեր աղա փեսան վարժուհին:

Վարժուհին կընդդիմանար, երբ Կոտոշն ալ եկավ և սկսավ զանազան պատմություններով համոզել, որ սխալ մը ըրած կըլլար, եթե էշ Մարտոյին հետ չամուսնանար:

Օրիո՛րդ, յավրո՛ւմ, սը իշուն յուլարը (սանձը) մի՛ փախցներ:

Մեկ քանի օր հետո վարժուհիին միտքը պարզվեցավ: Կուզեր որ էշ Մարտոն իր անունով 2000 տոլար բանկը դրամ դներ՝ ուզածին պես ծախսելու համար:

Էշ Մարտոն չի սիրեց այս առաջարկությունը:

Տահա ձեռքը չի սխմածի 2000 կուտ կուզե նը, վաղը որ կնիկս ըլլի ի՜նչ պիտի ուզե:

Բայց վարժուհին կանգնած էր ինքնապաշտպանության գետնին վրա: Մինչև 2000 ը ձեռքս չիգա, ինծի Էրիկ պետք չէ:

Կոտոշը և աղա փեսան մեկ քանի հոգիներ մեջ ձգեցին երկու կողմեն համոզելու համար:

Էս իմ փերես առնիմ տե, մնացածը ինչ կըլլի էն թող ըլլի, կը մտածեր Կոտոշ Չալին:

Շաբաթը հինգ դոլար կուտամ, համաձայնեցավ էշ Մարտոն:

Մարտոյին նպատակն էր կարելի եղածին չափ շուտ վարժուհին իր կինը պահել, արևելյան իմաստով կախված իրմե:

Վարժուհին հինգը փոխեց շաբաթը հիսուն դոլարի, կահ կարասի գնելու փեյմընթ սիսթեմի պես բան մը:

Էշը ականջները կախեց, տնտնաց և որոշեց.

Հա՛յտե, հիսուն դոլար կուտամ, ամմա բան մը պիտ ըսեմ, մինչև հիմա չեմ ըսեր, քանի որ ամեն ինչ որոշվեցավ՝ ըսեմ, հիսուն դոլար կուտամ պայմանավ, որ աղջիկը ազապ պիտ ըլլի:

Կոտոշը և փեսան անծանոթ բանի մը վրա երդում ըրին, և էշը գոհ մնաց:

⁂

«Հինգշաբթի օրը պսակ պիտի ըլլա, կավելցնե բարեկամս իր նամակին մեջ, բայց վարժուհին անգամ մը ամուսնացած է երկիրը»:

1921 թ.